Խաչիկ Դաշտենց

Ֆայտոն Ալեքը

4

Քսանհինգ թիվն էր: Քաղաքում արդեն
Մուտք էին գործել մի քանի ավտո:
Աշե՛ք, գավկոմի մեքենան անցավ,
Ցույց էին տալիս գյումրեցիք մատով:

Հունիսյան խաղաղ մի առավոտ էր,
Այդ օր բացումն էր Կապսի ջրանցքի,
Ու այդ մեծ տոնին Ալեքը վճռեց
Մի ուրույն փայլ տալ պատմական անցքին:

Մի օղի գցեց, պատին նայելով.
Կենա՛ցդ, ազի՛գ: Եվ շտապեց դուրս:
Սև ժամի մոտով նա քաղաք իջավ՝
Ծանոթ գյումրեցոց տալով բարի լույս:

Մի մարդ կանչում էր տաք լոշը ձեռքին.
Տայոնց մենձ ֆուռը, ամենքդ իմացե՛ք,
Ձվածեղի պես կարմրած հացը,
Գրվանքեն աժե էսօր հինգ կոպեկ:

Էս ի՛նչը տաքցավ մեր առուտուրը,
Բացվեց ամենքի դուքանի դուռը,

Ասաց Ալեքը, մի պահ լուռ նայեց
Ու մտավ հացթուխ Սիմոնի փուռը:

Սա հացը տվեց ու պատմեց վռազ
Նոր անեկդոտը իրենց քաղաքի,
Թե ինչպես Պոլոզ Մուկուչի կինը
Տաք ջուր էր լցրել մի կնոջ մեջքին:

Այդ պատահել էր Վեքի բաղնիքում,
Երբ այդ տիկինը պատմել էր փքված,
Որ Պոլոզի հետ ավտո է նստել,
Հանեսօղլյանի աջ կողքին բազմած:

Խնդաց Ալեքը, գլուխն օրորեց,
Հրա՛շք է Գյումրին, լեցուն երազով,
Կողի լավաշը ծալեց թևի տակ
Եվ դիմեց դեպի ճաշարան «Սամսոն»:

Այդտեղ էր ճաշում ամեն կիրակի,
Իջնելով քարե սանդուղներով ցած,
Փողը տալիս էր միշտ ամսավերջին,
Հինավուրց կարգ էր, սովորույթ դարձած:

Մտավ, լվացվեց: Մի «չանախ» կերավ,
Մոտեցավ պատին, բացեց վանդակը,
Կավիճով մի գիծ քաշեց անվան դեմ
Եվ Բիրժա գալով՝ հեծավ իր կառքը:

Ճիճվի բլրակով բարձրացավ վերև,
«Կարմիր աղբյուրից» ջուր խմեց հևքով,
Ապա շուռ տալով ձիու գլուխը՝
Սրընթաց անցավ Յոթ-վերքի կողքով:

Ճերմակ Համոյի խանութի առաջ
Մի պահ կանգ առավ, ծալեց մտրակը,
Ցած իջավ արագ, ինչ-որ բան գնեց,
Կայծքարով վառեց հաստ գլանակը:

Անկյունում կոշիկ սրբողն էր նստած,
Ամենքին ծանոթ Չիստիջի Գևոն,
Ալեքը մաքրեց ոտնամանները,
Բեղը ոլորեց գյումրեցու ձևով:

Հազիվ էր սանձը իր ձեռքը առել,
Նորից մոտ եկան քարտաշ ու դարբին.
Տղեք, հերիք է, կեսդ վար իար իջեք,
Կապսը հեռու է, կմնամ ճանփին:

Բան չկա, Ալեք, թեթև տղեք ենք,
Փարեն գլխեն առ՝ ֆայտոնը քշե:
Ալեքը թափով մտրակը շարժեց,
Ձիանքը մտան Ալեքսանդրովսկի:

Երանոսենց տան դռնով անցնելիս
Տեսավ յոթը կառք շարված են մոտիկ,
Մեկում դրված էր մի նախշուն փափախ,
Մյուսում՝ չուխա, երրորդում՝ գոտի:

Իսկ չորրորդի մեջ զուռնա էին փչում,
Հինգում մի սպիտակ մաքի էր կապած,
Վեցերորդի մեջ թիկնել էր Ծիտրոն,
Գլխին մի կարմիր դրոշակ տնկած:

Յոթերորդի մեջ գարեջրով լի
Մի մեծ տակառ կար Ջիթոխցոնց խանից,
Տակառի կողին ծուռումուռ գրված՝
«Յոթ ֆայտոն՝զանի՛տ»:

Եկան Մուկուչը և Նալբն Կարոն՝
Մի տկճոր գինի ու շամփուր գրկած,
Ելան նստեցին Ծիտրոյի կողքին,
Եվ ֆայտոնները շարժվեցին առաջ:

Ետևում մնաց Կամերսկու տունը,
Թատրոնի շենքը, քաղաքի այգին:
Եվ հին աֆիշներ պատերի վրա,
«Հույսի կործանում», «Պեպո», «Չար ոգի»:

Բազում գյումրեցիք Կապս էին գնում,
Ճամփա էին ընկել ոմանք գիշերով,
Հանկարծ գավկոմի մեքենան անցավ,
Ժպտաց Ալեքը մի բան հիշելով:

Այդ դաշտի մեջ էր, որ ռանչպար Սեթին
Հեղեղը քշել էր մինչև ձորատակ,
Ու այդ օրվանից գյումրեցիք նրան
Անվանել էին «Սելավի Սեդրակ»:

Կնութ Վարդանը այդտեղ էր, կարծեմ,
Մտրակը դիտմամբ շպրտել ճամփին,
Որ մինչև գալը ծանոթ պարոնը
Համբուրեր կառքում նստած օրիորդին:

Ալեքը արագ թեքվեց դեպի ձախ,
Հետապնդելով ավտոյի երթը.
«Հիմի կհասնեմ» , ասաց ինքն իրեն
Ու կառքը քշեց դեպի Սև բերդը:

Բերդի ետևով դեպի Կապսաձոր
Հոծ ժողովուրդն էր շարժվում Ճիրակի,
Այդտեղ էր նաև Չփլաղ Փիլոսը՝
Նստած երկանիվ իր ծուռ սայլակին:

Օրը շաբաթ էր, և ամբողջ Գյումրին
Զվարճանում էր երգով ու պարով,
Ալեքը հասավ ուղևորներին
Եվ կառքը ուղղեց լայն ճանապարհով:

Նրա ետևից Կռունկն էր ճեպում,
Սա էլ էր ճգնում ավտոյին հասնել:
Ո՞վքեր կան մեջը, հարցրեց Ալեքը,
«Արսեն Եսայան և դոկտոր Նանսեն»:

Օ՜, մեծագործ այր Ֆրիդյոֆ Նանսեն,
Արդյոք իմացա՞ր, որ քո ետևից,
Ալեքն է վազել Շիրակի դաշտով,
Կռունկն է կառքով մաքառել հեռվից:

Ու ես առիթից օգտվելով հիմա,
Թողած Ալեքին ու իր ոսկե ձին,
Քեզ եմ վերհիշում կարոտով մի պահ
Հոյակա՜պ, շքեղ մեծ նորվեգիացի:

Ինձ էլ վիճակվեց քեզ տեսնել մի օր
Որբական կյանքիս դառնահուշ շեմքին,
Դու վերջին անգամ եկար մեզ այցի,
Ու մեռար՝ երկրիս արևը դեմքիդ:

Վա՜յ, լուսը քոռնա, տես, գյոգալական
Ֆայտոնը թողած՝ ավտո են նստել,
Գոչեց Ալեքը, սաստիկ զարմացած,
Եվ իր խալաթի թևքերը քշտեց:

Ալեք ջան, քշե՛, խայտառակ էղանք,
Գավկոմի ավտոն ֆայտոնեն անցավ;
Եղնելիք բան չէ, խնդաց գյումրեցին,
Թող նա պարծենա, ով շուտ տեղ հասավ:

Մարմաշենի մոտ, բազմության առաջ,
Ալեքը հպարտ կանգնեց իր թառքին,
Ձեռնոցներն հանեց խրեց գոտու տակ,
Սանձերը հավաք՝բաց թողեց վազքի:

Եվ մտրակն ուժգին շրխկացնելով
Բարձրաձայն գոչեց՝ ամենքին ի տես.
Ո՛ւխ, Կայծա՛կ, ես քու ջիգյարդ ուտեմ,
Էսօրվա օրը ամոթով չենես:

Ու սմբակները գետնին զարկելով
Ձիերը թռան կրակ-թափ առած,
Կառքը սուրալով ավտոյից անցավ
Եվ դեպի ջրանցք հաղթական գնաց:

Ծափահարեցին: Քարտաշ Հարութը
Գլխարկն հուզմունքից օդն ի վեր նետեց,
Բարձրացավ փարվեց Ալեքի վզով,
Իջավ և կառքի ակը համբուրեց:

«Կալոսիդ մատաղ, ինչը՞ղ կը ֆըռռա,
Վո՞վ կըրնա, դուրբան, կոտրել քու մեջքը»:
Շատ ներող կեղնիս, ընկեր Եսայան,
Պատվի խնդիր էր, ասաց Ալեքը:

Մեքենան փորձեց առաջ ընթանալ,
Բայց իսկույն կանգնեց ծուխ արձակելով:
Ավտոն խարաբ է, խնդաց Մեխակը,
Եկեք Կապս ղրկենք Չփլաղի սելով:

Ինչը՞ղ, խարա՞բ է: Հը՛ռ, կեցի՛ր, Կայծակ,
Համեցեք ֆայտոն, ընկեր Եսայան,
Տե՛ղ տվեք, տղե՛ք, ասաց Ալեքը,
Ու կառք նստելով նրանք Կապս հասան:

Ծխով ժաժ եկող կալոսն էդպես է,
Ժպտաց Ալեքը, իջնելով թառքից,
Եվ նա ձիանքը տարավ ջրելու,
Ու ձորը թնդաց բազմության ծափից:

Կապսի խոր ձորում, թունելի դիմաց,
Սեղան պարզեցին մի քարաժայռի:
Պարկապզուկով ծաղկեցրին կենաց
Եվ ամբողջ խմբով բարձրացան պարի:

Ապա լվացին Ալեքի կառքը
Ու մի դրոշակ վրան տնկելով,
Ճանապարհ ընկան դեպի Պոլիգոն
Հաղթական ջրի գովքը երգելով:

Արևածագին Ալեքը մենակ
Յոթ-վերք շտապեց, և իմ լսելով,
Նա մատաղ արավ երկու աղավնի,
Արյունը վանքի պատին քսելով:

Այդ դեպքի մասին քաղաքն իմացավ,
Ծիծաղեց անգամ Կարախանյանը,
Հրաշք-հեքիաթ է Շիրակի դաշտը,
Չկա աշխարհում երբեք նմանը:

Մի տարի հետո երկրաշարժ եղավ,
Ո՞վ կմոռանա այդ ահեղ ժաժքը,
Ես տեսա՝ ինչպես Գյումրին ավերվեց,
Ու ցավից տնքաց նորից մեր ազգը:

Ալեքն իր կառքով անդուլ գործում էր,
Քանիսի՞ն տարավ նա Բոշի թաղը,
Քաղաքի այգին հյուրանոց դարձավ,
Ծառից կախվեցին շերեփն ու մաղը:

Քանի՛ հարս ու կին տաք բաղնիքներից
Կիսամերկ փախան Ալեքի կառքով,
Քանի՛ վիրավոր Բայանդուր գյուղից
Նա քաղաք բերեց վշտացած հոգով:

Ինքը՝ Ալեքը, ապրում էր կառքում,
Քանդվել էր պատը քարե տնակի,
Այգի էր տարել կողինքը, կատուն,
«Մայր Հայաստանը», «Քաջ Անդրանիկին»:

Տխուր ծորում էր ժաժքի նոր երգը,
Շուրջը սուլում էր Զաջուռի քամին,
Ձախ աչքով Փրկչի ժամին էր նայում,
Աջով նայում էր Պլպլան ժամին:

Բայց ոչինչ չօգնեց: Ավտոներն եկան
Ու գրավեցին ամբողջ քաղաքը,
Եվ կամաց-կամաց փոխվեց հին Գյումրին,
Ու դանդաղ թվաց ֆայտոնի վազքը: